

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլէֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բրիգադայի հրամանատար, գեներալ մայոր

Ի Ս Ա Ն Ա Վ Յ Ո Վ Ս Է Փ Ե Ա Ն Մ Է Լ Ի Ք - Հ Ա Յ Վ Ա Ջ Ե Ա Ն

վախճանվեց ամսին 2-ին, որի մասին այդի վարվառէ Յովսէփեանը իր որդկերանցով և ազգականներով սրտի ցաւով յայտնում է ազգականներին, ծանօթներին և ընկեր-ծառայողներին: Ամբիժը կը լինի հինգշաբթի և ուրբաթ, 4-ին և 5-ին փետրվարի, ժամի 7-ին, 8. Անանեանցիները տանը, Գոյովնսկի պրոսպեկտի վրա. իսկ յուզարկաւորութիւնը կը լինի շաբաթ, 6-ին փետրվարի, առաւօտեան ժամի 10-ին դէպի Վանքի մայր-եկեղեցին: 2—2

Կիրակի, փետրվարի 7-ին, ստատսկի սովետնիկ բժշկապետ

Մ Ա Ր Կ Ի Ա Ն Ո Ս Դ Ա Ի Թ Ե Ա Ն Ի Օ Տ Ի Ն Ե Ա Ն Յ Ի

մահվան քառասներորդ օրը Վանքի տաճարում պատարագ կը մատուցվի և հոգեհանգիստ կը կատարվի, որի մասին հանգուցեայի այդի Նատալիա Գրիգորեան, որդիք՝ Տիգրան և Արգաթ, աղջիկներ՝ Նինա Միրիմանեան և Եկատերինա Մէլք-Աղաման յայտնում են հանգուցեայի յիշատակը յարդել ցանկացող ազգականներին և ծանօթներին: Պատարագի սկիզբը 10¹/₂ ժամին, հոգեհանգիստը 12 ժամին: 1—1

Աղասի Առաքելեան և Եկատերինէ Կարլօֆա Մէլք-Աղամանները իրանց որդկերանցով յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ առաջինի մայր, երկրորդի սկեսոր, իսկ վերջինների՝ տատ

Ե Ղ Ի Ս Ա Բ Է Թ Մ Է Լ Ի Ք - Ա Յ Վ Ա Ջ Ե Ա Ն Ի

մահվան քառասներորդ օրը, կիրակի, փետրվարի 7-ին, Քամոյեանց ս. Գէորգ եկեղեցում (Վօրցոցայա փողոցի վրա), կը կատարվի պատարագ և յետոյ հոգեհանգիստ: Պատարագի սկիզբը 10¹/₂ ժամին, իսկ հոգեհանգիստը կը սկսվի ժամի 12-ին: 1—1

Սարգիս և Գրիգոր Սողոմոնեան Իստամբուլէաններ և Մարիամ Սողոմոնեան Աղաբէգեան՝ սրտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին իրանց թանգազին մօր՝

Ս Ա Լ Օ Մ Է Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն Ի Ս Տ Ա Մ Ա Ն Ե Ա Ն Ի

մահը: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, ամսին 7-ին, առաւօտեան 10 ժամին իր բնակարանից, Գրիգորեանց փողոց, № 20, դէպի Ջգրաշէնի եկեղեցին: Ամբիժը կը կատարվի շաբաթ, ամսին 6-ին, երեկոյեան 7 ժամին: 1—1

Այրի Վարդուհի Մկրտչեան Կիւրեղեանց իր որդկերանցով յայտնում է իր ազգականներին և ծանօթներին, որ ամսին 7-ին, կիրակի օրը, Մոլոն ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի իր թանգազին ամուսին՝

Թ Ա Դ Է Ո Ս Պ Ա Պ Ա Ն Ե Ա Ն Կ Ի Ի Ր Ե Ղ Ե Ա Ն Ի

քառասներորդ հոգեհանգիստը: Պատարագը կը սկսվի ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը կը կատարվի ժամը 11-ին: 1—1

Կատարինէ Միքայէլեան Սուսանեան և Եղիսաբէթ Միքայէլեան Մալուսեան՝ սրտի ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց թանգազին քրոջ՝

Ս Ա Լ Օ Մ Է Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն Ի Ս Տ Ա Մ Ա Ն Ե Ա Ն Ի

մահը: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի օր, ամսին 7-ին, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից, Գրիգորեանց փողոց, № 20, դէպի Ջգրաշէնի եկեղեցին: Ամբիժը կը կատարվի շաբաթ օր, ամսին 6-ին, երեկոյեան 7 ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այժմ է օգնելու ժամանակը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Լիւայցիայից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից.—ՀՅՈՒՄՈՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր կրօնափոխութիւնները և Բաղկանեան թերակղզին:

ԱՅԺՄ Է ՕԳՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Գարունը մօտեցել է և շատ տեղերի համար տանջող հոգս է դարձել արտեր ցանելու հարցը: Այս տարվայ հաղուազիւտ տաք ձմեռային եղանակի շնորհիւ մի քանի տեղերում արդէն զործում են դուրսը և արօրը, իսկ միւս տեղերում նոյնպէս շուտով պէտք է զործի դրվեն այդ զործիները, Սակայն մի ընդարձակ

տարածութիւն գեռ չէ կարողացել վերականգնել իր քայքայված տնտեսութիւնը և դժուարութեամբ պիտի ձեռք բերէ սերմանելու համար բաւականաչափ հացահատիկ: Դրան կարող ենք աւելացնել և այն, որ մեր սահմանակից երկրներում ևս, այն է Թիւրքիայում և Պարսկաստանում, գիւղացիների տնտեսական վիճակը այս տարի միթարական չէ և այնտեղ աւելի ևս մեծ կարօտութիւն է տիրում, քան մեր երկրում, ուր բարեկարգ ձմեռապահպանութիւնը և հաղորդակցութեան շնորհիւ հեշտութեամբ տեղափոխվում է հացը երկրի մի մասից դէպի միւսը:

Իսկ եթէ գիւղացիները անկարող կը լինեն և ներկայ դարեան ցանել իրանց արտերը, այն ժամանակ նրանք առաջուց կարօտութեան մատնված կը լինեն առաջիկայ աշնանը և ձմեռը: Այժմ պէտք է գիւղացուն օգնել, որպէս զի նա արդիւնաւոր կերպով գործադրէ իր աշխատանքը, ապահովէ իր ընտանիքը և դուրս գայ այն պարտքերից, որոնց ծանրութեան տակ նա ճնշվում է ներկայումս:

Նաո ցաւալի է, որ մենք չունենք զեմտովի նման մի հաստատութիւն, որ կարողանար փոխարինաբար տալ գիւղերին յայտնի քանակութեամբ սերմացու և յետոյ, հունձը վերջացնելուն պէս, յետ ըստանալ իր տուածը: Այդպիսի մի գործադրութիւն կը լինէր գիւղացու համար մեծ բարիք, որովհետեւ գիւղացին չէ սիրում ողորմութիւն խնդրել և մուրալ, այլ նա կատարելապէս գոհ է, երբ նա ստիպված չէ պարագ թողնել իր արտերը, իսկ իր պարտքերը համար որոնել մշակութիւն ուրիշ տեղերում:

Մնում է, որ գիւղական համայնքները իրանք, կամ եղած հաստատութիւնները, օրինակ Բարեգործական ընկերութեան Ծիւղերը և կամ վերջապէս առանձին խմբեր և անհատներ, իրանց սրտի մօտ աւելնով գիւղի բարօրութեան հարցը, ձեռնարկեն օգնելու կարօտ գիւղացիներին և տան նրանց ձեռքը ցանելու սերմ այնպիսի քանակութեամբ, որ բոլոր արտերը ցանված լինեն: Այդ ձևով կարելի է բաւականաչափ թուղացնել այն շարունակվող կարօտութիւնը, որ բուն է գրեթէ նոյն իսկ այնպիսի գիւղերում, ուր գեռ մշակութեան համար կայ բաւարար քանակութեամբ հող, բայց տնտեսութիւնը, որ մի անգամ քայքայված է, չէ կարողանում ոտքի կանգնել: Այն օգնութիւնը, որ այժմ ընդունակ է մաքառելու կարօտութեան դէմ, կը դառնայ զրօ այն ահագին կարօտութեան առաջ, որ հանգէս կը գայ, երբ երկրագործի դաշտերը կը մնան անմշակ: Օգնելու ժամանակը—այժմ է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Յիւրան եկն, և իւրքն գնա ոչ ընկալանա»: Ճիշդ այսպէս է պ. Նիկողաձէի դրութիւնը: Թէև «ԿԱՅՐԱՅ»-ը մի քերթ ներքողական առաջնորդող կամեցաւ մտցնել «տաղանդաւոր հրապարակախօսին» իր գաղափարակից մամուլի չըջանը, բայց աւանդ... անախող էր և այդ փորձը: Օրէնքներ կան, որոնց չես կարող ջնջել ոչ մի բէկլամով, ոչ մի գոռում-գոչումով, սապափութիւնը ոչ մի տեսակ գնդակներով: Եւ այդ տեսակ օրէնքների մէջ, անշուշտ, վերջին տեղը չէ դրաւում այն, որ ատու է թէ չէ կարելի երկու հակառակ սկզբունքներին ծառայել, չէ կարելի ներքու աթոռի վրա նստել և ցոյց տալ թէ մի հատ աթոռի վրա ես նստած: Մենք ժամանակին ասացինք («Մշակ» № 7), որ պ. Նիկողաձէ «մի ոտը դնելով պ. Վէլիչիօի լրագրում, միւս ոտը ուղղում է պահել այդ լրագրից անյատակ խորհրդատներով բաժանված ուղղութեան վրա»

և աւելացրինք, որ այդ տեսակ քաղաքականութիւն կատարելը անհնարին բան է: Այսօր մեր գուշակութիւնը կատարված է: Պ. Նիկողաձէ, ինչպէս յայտնի է, առաջարկում էր սահմանափակել հայերի ընտրողական իրաւունքը և դուրսնելի ձայնաւորների ընտրութեան մէջ ղեկավարվել ազգութիւնների հաւասարութեան բնական բռնեղով, այսինքն այնպէս անել, որ պարտաւորական լինի բոլոր ազգութիւններից սահմանված թուով ձայնաւորներ ընտրել: Ըստ երևոյթի, այդ ծրագիրը, որ չը տեսնված մի միջոց է հայերի դէմ, ամենից շատ համակրութեան պիտի արժանանար այնպիսի մի կոյր հայատեացի կողմից, որպիսին է «Новое Время» լրագրից: Բայց բանից դուրս է դալիս, որ այդպէս չէ և պ. Նիկողաձէին մերժում են նոյն իսկ ուսու «հայրենասէր» պահպանողականները: Սուփօրինի աշխատակիցներից մէկը, Old Gentleman, քննելով պ. Նիկողաձէի յօդուածը, համաձայնվում է նրա հետ մի կէտում—որ հայերը չարք են, բոլոր դժբախտութիւնների պատճառ են և այն, երգեր, որոնք վաղուց են երգվում և որոնց հեղինակութեան մէջ պ. Նիկողաձէ միայն կրկնողի դեր է կատարել: Բայց դալով յատուկ սահմանափակող օրէնքներին, որոնց պ. Նիկողաձէ սպասում է իբրև երկնային մանանալի, յօդուածագիրն ասում է.

Ռուսաց օրէնքը դրված է ոչ հայերի, ոչ վրացիների, ոչ էլ թուրքերի համար, այլ ուսուսաց հայ աւակների համար,—ամբողջ պետութեան համար և ոչ թէ պետութեան մասերը կազմող ազգերի և ցեղերի համար: Պահպանել այդ ազգութիւնները իրանց նախնական անձեռնմխելիութեան մէջ, կամ տալ նրանց արտօնութիւններ միւս ազգութիւնների ղիմաց, որոնք նոյնպէս հպատակ են, Ռուսաստանի համար ոչ մի օգուտ չէ ներկայացնում... Ռուսաց ընդհանուր օրէնքի առաջ չէ կարող լինել ոչ հայ, ոչ վրացի, ոչ թուրք, այլ պիտի լինի միայն ուսուսացատակ, որ հրաւիրվում է կատարել օրէնքը այն իսկ ձառնապարսով և կարգով, ինչ որ կայ ամեն մի ուրիշ ուսուսացատակի համար:

Հարց է իրաւական կը լինի այդ դասը, որ տալիս է պ. Նիկողաձէին նրա ընտրած նոր գրական բանակի անդամները մէկը: Չը դիտենք: Յայտնի է միայն, որ մինչև այդ դասը առնելը, մինչև «Новое Время»-ի այդ համարը Թիֆլիսում ստացվելը, պ. Նիկողաձէ էր հանդէս եկաւ «ԿԱՅՐԱՅ» լրագրում իր ծրագիրը մի անգամ ևս պաշտպանելու համար: Այս նոր դրուածքի մէջ յարգելի հրապարակախօսը բոլորովին խրվել է հակասութիւնների մէջ, որովհետև ճանաչող երկրորդութիւնը այժմ էլ նրան չէ թողել: Մի կողմից նա փրփուր բերանին դուռում է, որ Թիֆլիսը հայերի լուծի տակ է գտնվում, որ այժմեան դուրսի ուսուսացականները «հայերին հանձնել» մարդիկ են, իսկ միւս կողմից ուղղում է շտկել այդ չափազանց «վէրլիչիական» դառանցանքները:

Թիֆլիսում ընդհանուր քաղաքական շահը այն է, որ այն մէկ ու քաղաք միլիոն ռուբլիները, որոնք ամեն տարի հաւաքվում են բոլոր Թիֆլիսցիներից, առանց խտրութեան կրօնի, ցեղի ու կարողութեան, գործածվեն բոլոր իսկների, ցեղերի և դասակարգերի օգտին և ծախսվեն այդ բոլորի ներկայացուցիչների կարգադրութեամբ: Սակայն այժմ այդ գումարը կարգադրում են—և չափազանց վատ կերպով—միմիային հայերը, թող չը տալով, որ միւս ազգութիւնների ներկայացուցիչները մասնակցութիւն ունենան և նոյն իսկ հիկն իրանց վարչութեան վրա:

Տեսնում էք ինչպէս սարսափելի են հայերը, վերցրած ամբողջովին, իբրև ազգ. Նկատեցէք, որ այդ մեղադրանքը ուղղված է ոչ թէ հայերի այս կամ այն դասակարգերի, այս կամ այն շրջանների դէմ, այլ առհասարակ հայերի դէմ: Բայց մի վախճ. Շուտով պ. Նիկողաձէ ցոյց կը տայ Նանուսի միւս դէմքը և բոլորովին այլ բան կը ստացվի: Ահա.

Հայկական գործը, քանի որ ներկայանում է իբրև մի բարոյական հասկացողութիւն, չա՛հ չունի, որ Թիֆլիսի դուռնայ մէջ գերակշռող հանդիսանալ կամ թէ անտեղից դուրս բլլի մի որ և է ուրիշ ազգութիւն: Այդ բանին կարօտ են միայն միջոցների խտրու-

Թրանսիայի այդ առաջնությանի հովանավոր
էլ թեան դեմ թիւրք կառավարութիւնը միշտ
խառած է կողմնակի ճանապարհներով և խո
մանի միջոցներով կռււ մղել: Մինչև ան
սովթանը մի ճանի առկթիւնքով փորձած
բոլորովմէ քառան անել ոչ միայն ֆրանսիա
դեսպանին, այլ և Կ. Պօլսի պապական հոռ
կին—որը՝ ինքնին ոչ մի թաղաքական յան
րարութիւն կամ դեր չէ կատարում, այլ մի

